

պայմաններ ունի, այլ և կան տեղեր՝ ուր անուշը անգամ զրեան թէ չկայ՝ թող թէ արդիւնքը:

Եւ ահա այս խնդրէ կհետեւի՝ որ դաստիարակութիւնն փոխանակ բարի համակրութիւն գտանելոյ և արդիւնաւորութեան, ընդհակառակն՝ շատ տեղ ասելութեանց կենթարկուի, և եթէ բարձր իշխանու-

թեան պարտադիր զօրութիւն չմիջամտէ, և հրապուրիչ միջոցներ չլինին, դաստիարակութեան խնդիր շատ ամուլ կամ անձուկ դրից մէջ կմնայ:

Շայոց վերայ դարձունելով խօսքը՝ օրինակներով ապացուցանեմք:

(Ի յարմարեալ)

Վ. ՎԱՐԴԱՊԵՏ ՄԱՆԿՈՒՆԻ.

ԾԵՐՆ Ի ՄԱՍԻՍ.

Ազատ Մասեաց ընդ լեառն ի վեր հայթայթելով բարձրացայ,

Վ իմէ ի վէմ՝ ժայռից ի ժայռս՝ ոստոստելով խոնջեցայ.

Սաղարթ ախիտ ծառ մի տեսի, փոքրիկ աղբիւր առ ընթեր,

Ընկողմնեցայ հոգի առնուլ՝ ուր կայր դալար բուսարեր:

Երեսս էր դէպ հիւսսարեւելք, ինքնս յոգնած չափազանց,

Չէին աչացս պարզ երևիր գագաթք բլրոց, ծաղք լերանց.

Որոց վերայ գորչ մառախուղ տարածել էր իւր ծածկոյթ,

Վը խափանէր քողարկելով բնութեան ամեն երևոյթ:

Միայնութիւնս զիս նեղացոյց, ասի՝ երնէկ այս աղբիւր,

Ընկերանայր առանձնութեանս, և պատմէր ինձ զանցեալս իւր.

Արդեօք սա ևս ինձպէս ծեր է, թէ գեանէն նոր է բղխել,

Վամ թէ այս ծառ ինքնաբոյս է, թէ ձեռք մարդոյ է տնկել:

Չայն լուեցաւ աղբերակնէն, իբր ի խորոց անդնդոց,

Նծութիւն էր հառաչանաց թախծեալ սրտից և հոգւոց.

Եսաց «Վեռ դու եօթանասուն տարիքդ նոր ես կատարել,

Եյլ ես եօթնեակ հազարամեակք եմ՝ այս սարում բոլորել:

Ե՛յն օր գեանէն սողոսկելով ջուրս կարկաջմամբ դուրս վազեց,

Երբ ծեր Մասիս իւր կոկորդէն ծծմբախառն բոց ժայթքեց.

Նրածորան գետք վայր խաղացին զագաթէն մինչ ի ստորոտ,

Իմ ծագման հետ ձայնք հնչեցին հըրառք, շանթիկ և որոտ:

Մինչ ևս այս տեղ խոխոջացի, Սեան յաջմէ լըճացաւ,

Եւ նրազդան վըճիտ լըճին՝ նոր մատուռակ կարգեցաւ,

Որպէս Քասաղ գետն ի ներքուստ՝ իմ ծորանէս բաղկացած,

Շըրէկ բլրի կշտէն անցաւ՝ հանդոյն այլոց վըտակաց:

Երբ նախկին շայն ինձ յայց եկաւ՝ ձեռին ունէր մէկ ոստիկ,

Ոչ զիտեմ թէ ի՞նչ խորհրդով բերեց անկեց ինձ մօտիկ.

Հայկակիա անուն կոչեց, ունէր պտուղ քաղցրահամ,
 Որ արդ բերէ միայն պատիճ՝ որոյ սերմ է տուպահամ:
Այնուհետեւ երկու հազար և հինգ հարիւր ամք եղին,
 Որ ակնկոր դէպ ի ստորոտս միշտ կըսողամ այս տեղէն.
 Ո՛հ թէ ինչե՞ր են անց կացել, ինչե՞ր տեսել եմ աչօք,
 Ի՞նչ քաղաքներ արքայանիստ, փառազարդեալ պըսակօք: ,,

Այս միջոցին շողաց արև, փարատվեցաւ մէջ մըթին,
 Լ՛երինք զուարթ երևեցան դալարագեղ ի հովտին.
 Յայնկոյս լերանց անշուք բլրակք ծածկեալ ցախիւք մացառաց,
 Յորս յառէին աղբեր անթարթ աչք տոգորեալ յարտասուաց:

“ Կը տեսանե՞ս՝ ասաց թախծեալ՝ մոլախոտեալ այն բըլուրք,
 Ջորովք մածեալ հազարամեայց կան կիսամաշ խանձարուրք.
 Մին Արմաւրի է ամայի աւերակաց մընացորդ,
 Որ վաղնջուց նախնեաց Հայոց երջանկութեան էր հաղորդ:

Միւսն Արտաշատ՝ Աննիբադայ ձախորդ կենաց յիշատակ.
 Վանի՞ դահոյս դիւցազնականս ծածկէ իւր հին փըլատակ.
 Ընդ՝ Լըրուանդեան նստաւ Տիգրան, աստ՝ Տիգրան Մեծ Պարթևեան,
 Արշակունեաց աստ ուռձացան փունջք սարդինեանց պճնութեան:

Կը տեսնե՞ս այն երրորդ բըլուր՝ Շըրէզի մօտ բարձրացած,
 Ուր և Վասաղ լուռ և մունջ կայ իւր՝ ամիանց մէջ շուարած.
 Արտիմէդ է այն վաղեմի, հընոց՝ Աւան Ալարդդէսեան,
 Ալաղարշապատ կոչեց Ալաղարշ՝ կանգնեալ անուան իւր արձան: ,,

Ես հարցուցի, “ Ի՞նչ է ապա գեղատեսիլ այն կերտուած,
 Որ տատրակի նըման տըխուր ի դաշտավայրն կայ նստած.
 Երեք և չորս գլուխ ունի, կարծես՝ յերկինս կը նայի,
 Կարծես Վասաղ նորա աչաց արտասուօք կայ յիւր կայի: ,,

Յողուց հանեց փոքրիկ աղբիւրն, հառաչանքն էր ցաւազին,
 Եսաց, “ Ահա՛ անդ է միայն յոյս աղաւէն Հայ Ազգին.
 Որ կորցրել է չարաբաստ՝ երանաւէտ իւր վիճակ,
 Վաջիկ նախնեաց բարեաց նշխարք, ազատութեան պերճ պըսակ:

Որ տէր ազգաց էր և ազանց, այժմիկ թշուառ է խեղճուկ . . . ,
 Ջարիւն նորա ծըծնն անյազ կովադիոյ և տըրուկ.
 Ջըրավաստակ աշխատութիւն կրէ ի տօթ տունջեան,
 Եւ գիշերի ոչ տեսանէ զերես խուն ինչ հանգստեան:

Յորժամ կորոյս իւր ապարօշ չորիցս կապեալ ի գըլուխ,
 Գետահետեալ հեղան ի նա հոսանք չարեաց յորդաբուզիս.
 Ընջատեցան ի գրկաց Մօր, յօտարութիւն վարեցան,

Չեռաց ի ձեռս յափափելով ընդ ծագս համայն ցնդեցան:
 Ե.յս տատրակի ձագերն էին որք որս եղին ձիրանաց,
 Թէ անդեղաց թէ պասկուձից սրավառ ճանկից և մազլաց.
 Մայրն անորդի վեր կընայի՝ գուցէ թերևս իւր ճընունդք,
 Ի թեատակ իւր ժողովին՝ անցեալ ընդ վիհ և անդունդք:
 Ե.յս վայր՝ ուր կայ մաքուր տատրակն, որ քեզ թուի անապատ,
 Լ. երջանիկ մայրաքաղաք Վ. աղարշապատ մարդաշատ,
 Եւ այն կերտուած՝ որ քեզ թուեց տատրակ թառեալ յամայի,
 Լ. ջմիածինն է շարսնարան և առագաստ Միածնի:
 Գու ևս շայ չե՞ս՝ մի ի ձագուց այն տատրակին անարատ,
 Կեզ ևս ձիրանք զիշխսանձից չե՞ն աղդել ցաւ անփարատ.
 Եհն ճանչցիր՝ սս է քո Մայր, սուրբ շարսն Ենմահ Փեսայի,
 Եւ դու ճընունդ մի ի բիւրուց սորա մաքուր արգանդի:
 Կեանքդ արգասիք են կայլակաց Սորա անբիծ Սուրբ Ստեանց,
 Երախտապարտ մաքուր դայլեց գորովալիւր դիեցմանց,
 Ինքն է Գրախտն Եստուածատունկ, և քառառաջ իւր աղբիւրք,
 Յորոց որպէս ի շից կաթին յագեալ սնանին բիւրուց բիւրք:
 Կա ի նանիր աչք և գլուխն չէ դէպ յերկինս բարձրացրել,
 Կաջայոյս է որ իւր Փեսայն կուգայ խոստմունքն լրացնել.
 Ը. ուրջ զՄասեօքս քառապատիկ կրկնել անզրաւ ոսկեզար,
 Յարուցանել Մեղքիսեդէկ խաղաղարար և արգար:
 Ե. իս՝ ճերունի, առատ իմ ջուրք՝ որովք Կասաղ կը սնանէր,
 Կուտղել են յականս իւրեանց, վասն այն չէ ծառս պողաբեր.
 Ե.յս ջուր որ արդ կը տեսանես՝ չէ ինքնաբուղիս ջուր նախկին,
 Ե.յլ դառնահամ արթօսը յորդեալ յաչաց որբուկ շայ աղգին:
 Բարձրագլուխ Լ. ջմիածին՝ զիմրդ կարծես, զե՞նչ խնդրէ,
 Որ քեզ թուեց թէ դէպ յերկինս իւր աչք սըրտիւ կը յառէ.
 Իսկամուտ լեր՝ որ այս Կշխոյ որդեկորոյս թագուհի,
 Երտասուալից աչք իւր կուզգէ յամեն կողմունս աշխարհի:
 Մերթ ի Գուին կ'արկանէ ակն ողբալ նորին զաւերակ,
 Կառնակսկիծ յուշ բերելով վազանցելոց յիշատակ.
 Մինչ Մեծ Վ. հասն Մամիկոնեան իւր անկոպար արութիւն
 Ի դործ եղեալ հանդիսանայր յԱզգին իւրոյ փրկութիւն:
 Ենդ էր Վ. արգան իւր շօրեղբայր քանի ամօք նախ քան զայն,
 Բացել զըրօշ ազատութեան դէմ Յազկիրաի բռնութեան.
 Ենդ և Վ. ասակ ազգամատնիչ դարանակալ շայրնեաց,
 Չար օրինակ եղև յետնոց և համակ իւր նմանեաց:

Բայց նա գահ էր արքունիական, Առամշապուհ անդ էր նստել,
 Սուրբ Խասհակ ընդ Մեսրոպայ՝ ի սէր Ազգին անդ մաշուել
 Մեզ զառաջինն բացան դպրոցք շայրոց ազգի դպրութեան,
 Անտի չուեցին մեր թարգմանիչք ի կրթարանս յունական:

Ապա դառնայ դէպ յԱխուրեան սրգալ զԱնուոյն փրլատակ,
 Ուր գեղապանծ Բագրատունեաց գրուելս պճնէր ի պրսակ:
 Շուրջ զնովաւ բոլորէին հանգոյն վարդից քաջազունք,
 Եւ յասպարէս արեգերաց հռչակէին դիւցազունք:

Եկեղեցին և շայրենիք պատսպարեալ ի նըմին,
 Ի դարս կրկին մխիթարէր յորդիս նորին սիրածին:
 Մինչ յաշաղկոս Բիւզանդիոն և շագարուն արշաւան,
 Օերկնադիտակ բրգունս նորա տապաստ արկին ի կործան:

Ապա ի Սիս հայի ցաւովք, և ի նորին գահ խարխուլ,
 Աղբերաբար հեղու զարտօսր բղխեալ անդուլ, այլ զանխուլ,
 Թէ ո՛ւր է գահ Արիկեցւոց՝ վիրացս վերջին պալասան,
 Օոր ազգասէր իմաստութեամբ աջ քաջ կազմեաց Ռուբէնեան:

Ո՛ւր են նորա ահեղ թորոսք ջոկաց Յունաց արհաւիր,
 Յորոց փախէր ահասարսուռ շելէնեան ազգ և երկիր:
 Եւ Մեծ Լէոն զարդ խաչակրաց՝ որ Տրդատայն թագ փառաց,
 Ի զլուխ Ազգին և շայրենեաց անդ զայս երկցս նորոգեաց:

Շուսկ ամբառնայ զարտասուլթոր աչս իւր ի վեր դէպ յերկին,
 Մշտամուռնչ հեկեկանօք առ իւր Փեսայն Միածին,
 Թէ ո՞վ ծընող որբ զաւակացս, երբ հասցէ վերջ իմ ցաւոց,
 Երբ բուժեսցին քո զթութեամբ ոգեպահանջ վէրք և խոց:

Յիշեան զբան ծառայի քո՝ յուսացուցեր յոր և զիս,
 Ի ծոց շարսինս քո ժողովել զմեր ծնունդս և զորդիս,
 Գալ և բնակիլ յառազաստիս, նորոգել զիմ շարսնարան,
 Անմահ Գրիգոր ընդ սիրելւոյդ ազգէ յազգ տալ ինձ պաշտպան:

Յոտս աստ Մասեաց՝ ուր զառաջինն զՏապան քո հանգուցեր,
 Յեղեմատունկ բուրաստանէն փոխել զճառն կինսաբեր,
 Ի Սինայէ փոխադրել աստ զաննիւթ տախտակս քարեղէն,
 Մատամբ շնորհաց դրոշմեալ անջինջ զօրէնս սիրոյ ազգաշէն:

Ընդ Սիոնի՝ ուր հաստեցեր՝ զընթրեաց խորհուրդ փրկարար,
 Նորակերտել աստ ի ծոց իմ՝ նոր վերնատուն հրաշափառ:
 Օ՛ր յիս մարմին և արիւն քո երկնատեղաց մանանայ,
 Եւ մշտաբուղիս աղբիւր կենաց յաւէժ որդւոց մեր մնայ:

Գողգոթայի շնորհ Խաչիդ՝ ուր տեւեցեր իննեակ ժամ,

Տաղաւարեալ անկէտ աւուրբք յիս հանգիցէ յարածամ՝
 Եւ Ձիթենեաց լերին՝ ուր հեռք գարշապարացդ նշմարին,
 Փառք և պարծանք աստ տարրացին յանսուտ նշան քո դարձին:
 Քանզի որ օր հինն այն Սիոն զքեզ ի խաչ բեւոեաց,
 Գարձար առ Հայր Քո առաքիչ անցեալ ընդ սար ձիթենեաց,
 Եւ քի լիցի իջեր Հօրդ ի ծոցոյ ոսկի ուռամբ հաստատել,
 Ի հիմունս իմ խարիսխ սակի քեզ բնակարան նոր հաստել:
 Գուռ ասացեր՝ այս է հանգիստ իմոյ Անձին յաւիտեան,
 Եստ բնակեցայց, զի սա գրաւէ զշնորհ իմոյ հաճութեան.
 Եւ իմ դստերք երեսնեւեթն աստ ի լապտեր Սանդխտոյ,
 Չարիւն իւրեանց կայլակեցին իբր հանգանակ սուրբ ձիթոյ:
 Մին է զլուխ իմ՝ որ եմ Գլխոյ, Հարսն երկնաւոր Փեսայի,
 Երեք զլուսք օրիորդաց զենլեաց ի սէր Միածնի.
 Յորժամ բերցէ իմ տարփալին անմահ փեսայն ոսկիդար,
 Յորդեցի ջուր իմ ի Քասաղ, և պտուղ քաղցր բերցէ ծառ , , :

ԵԵՐՈՒՆԻ ԳԱՐՐԻԷԼ ՊԱՏԿԱՆԵԱՆ.

ԱԶԳԱՅԻՆ

Ի ԿՊԱՍՏ ՍՈՎ ԵՒ ՈՅ.

Համայն աշխարհ լսեց Եսիոյ մի քանի կողմանց մէջ՝ ի Գաղատիա, Առօղղատ, Ե յն. և յն. տիրած սաստիկ սովը, որով բազում մարդիկ չարաչար կտազնապին, մանաւանդ խիստ ձմեռ ևս վերածամաներով և ճանապարհաց հաղորդակցութիւնք դժուարանալով՝ զրիթէ ի սպառ յուսահատութեան մէջ կտառապին տեղական թշուառ բնակիչքն: Ա՛յն աստիճանի հասած են՝ որ գոհ պիտի լինին եթէ ուտելոյ խոտ անգամ գտնեն:

Թշուառ ծնողք, ինքեանք սովալլուկ տազնապիլէ զաս՝ իւրեանց զաւակաց ազիողորմ հեկեկանքը լսելով և չկարողանալով հանդուրժել՝ ունանք ի յուսահատութենէ ստիպեալ՝ գաղթականութեան կեննն և ի ճանապարհին կամ անօթութենէն կմեռնին և կամ ցրտէն կսառին. ոմանք ընդ զաւակացն ի միասին արտասուաց հեղեղներ հոսելով և աշխարհելով՝ ժամէ ի ժամ կսպասեն մահուան ծիրանաց զոհ երթալոյ. մինչև անգամ մի քանի ծնողք իւրեանց զաւակունքը մորթած են ի սնունդ անձանցն մի պաշար հայթայթելոյ կատաղի և գազանական մոլութեամբ՝ և խելագարութեամբ և յն:

Եհա այս հակիրճ կտորէն կիմացուի Եսիոյ բնակչաց սովալլուկ վիճակը, զոր հառաւոր երկիրներ և օտար աղգեր անգամ լսելով՝ մարդասիրաբար ի գութ կչարժին և կարենոր օգնութիւններ կնուիրին:

Սեղական Աստուածաբանութիւն ամեն ջանք և խնամք ի գործ կղնէ սովելոց դառն վիճակը թեթեւցնելոյ համար: